Ընդհանուր տեսադաշտ

1. ***Ինչպիսի՞ն է Ձեր տեսակետը քաղաքի զարգացման հիմնական գերակայությունների մասին:***

1991-1992 թվականների հատման ժամանակ տեղի ունեցած պետական հեղաշրջումից սկսված, իշխանություն եկած անօրեն ուժը (Ռազմական խորհուրդը և Պետական խորհուրդը) և դրա իրավաժառանգորդները ողջ երկրի, այդ թվում մայրաքաղաքի գլխին փաթաթեցին շատ հիմնախնդիրներ, որոնց հիմնովին վճռման համար, նախ և առաջ անհրաժեշտ է, որ երկրում հաստատվի օրինական իշխանություն:
Այսօրվա մոտեցմամբ, մեր առջև ծառացած հիմնախնդիրներից գլխավորներից մեկը քաղաքային քաղաքականության ճիշտ պլանավորումը և իրականացումն է:
Ոչ պակաս կարևոր են վթարային տների հարցը, քաղաքի ջրամատակարարման գործում առկա թերությունները, տարբեր թաղամասերում ներքին ճանապարհների կարգավորումը, փոքր չափի հանգստյան վայրերի կազմակերպումը և այլն:

Զարգացում և տնտեսություն

2. ***Խնդրում ենք, համառոտ նկարագրեք քաղաքի երկարաժամկետ տնտեսական զարգացման Ձեր տեսակետը/պլանը (եթե այդպիսինն ունեք):***

Երկարաժամկետ տնտեսական քաղաքականությունը, հիմնականում, հիմնվում է քաղաքի զարգացմանը անհրաժեշտ ֆինանսական հնարավորության ներգրավման այնպիսի կանխագուշակելի ցուցանիշների վրա, ինչպիսիք են պետական և մասնավոր ներդրումները: Այս տեսակետից, նախ և առաջ անհրաժեշտ է, որ երկրի կառավարման գլուխ գան երկրի քայքայման մեջ մաս չունեցող և արհեստավարժ կադրեր:

3. ***Ձեր կարծիքով, որո՞նք են այն գլխավոր հիմնախնդիրները, որոնք խոչընդոտում են Ձեր քաղաքի տնտեսական զարգացմանը:***

Այսօրվա դրությամբ, երկրի ղեկավարությունում գտնվող ուժերի մասը կամ անձամբ իրենք անմիջականորեն մասնակից են 1991-1992 թվականների պետական հեղաշրջմանը, կամ «լավագույն» դեպքում ներկայացնում են նրանց արմատներից աճած, նրանց գաղափարախոսությունը որոշակիորեն կիսողներ:
Երկրի, և այդ շրջանում Թբիլիսիի տնտեսական լծակները, ճիշտ վերևում հիշված հանցագործ ուժի ձեռքում գտնվելու պատճառով են խախտված, և այդպես կլինի այնքան ժամանակ, մինչև երկրի ղեկավարություն չի գա իշխանության քայքայմանը մասնակից ուժից արմատապես տարբերվող թիմ:

4. ***Ձեր կարծիքով, որո՞նք են Ձեր քաղաքի հիմնական հնարավորությունները/ գերակայությունները, որոնք կձգտեք կիրառել քաղաքի տնտեսական և քաղաքային զարգացման հասնելու համար:***

Քաղաք Թբիլիսիի բնական իրավիճակը մեծավ մասամբ սահմանում է նրա քաղաքային զարգացման ընդհանուր շրջանակները: Ճարտարապետական պլանավորման մեջ վճռական լծակը հատկապես պետք է որոնել մայրաքաղաքի դիրքին ներդաշնակված նախագծերի զարգացման մեջ:
Մայրաքաղաքի տնտեսական զարգացումը մեծ մասամբ կախված է վերջին 20-25 տարվա ընթացքում երկրի ղեկավարությունից հանցագործ ուժի արագ և ոչցավալի հեռացումից: Իսկ այս վերջինը ամբողջությամբ կախված է ոչ միայն ժողովրդի կողմից ընտրություններում արտահայտված կամքից, այլև նրանց այս կամքի դրսևորման վերջնական արդյունքի իրատեսական պահպանությունից և աջակցությունից:

5. ***Ինչպիսի՞ն են Ձեր բյուջետային գերակայությունները: Խնդրում ենք համառոտ մեկնաբանեք Ձեր բյուջետային քաղաքականությունը:***

Մայրաքաղաքի բյուջեում գերակայող հարցերի շրջանում գլխավոր տեղը պետք է գրավի բնակչության առջև ծառացած սոցիալական հիմնախնդիրների կարգավորման թեման: Իշխանության ղեկավարը բյուջեում մոբիլիզացված գումարը լրիվությամբ պետք է ծախսի հարկերը վճարողների առջև ծառացած կենցաղային և սոցիալական հիմնախնդիրների կարգավորման համար:

6. ***Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքի բիզնես և կոմերցիոն ենթակառույցի բարելավման, ներդրումների գրավմանը նպաստելու համար:***

Դրա համար նախ և առաջ հարկավոր է.

- Հավասար, մատչելի և թափանցիկ մրցունակ միջավայրի ստեղծում,
- Երկրի կառավարման ղեկից երկրի քայքայման մեծ բաժին ունեցող ուժից ազատվել,
- Տենդերային քաղաքականություն վարելու լծակը փոխանցել արհեստավարժ և արժանապատիվ կադրերին:

Քաղաքային զարգացում/քաղաքի նախագծում /բնակարանաշինություն

7. ***Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքացիների համար ավելի լավ բնակության պայմաններ ստեղծելու համար:***

Բնակության պայմանների բարելավումը պահանջում է համապարփակ մոտեցում, և հիմնականում կախված է քաղաքի պլանավորման ոլորտում արհեստավարժ կադրեր ընդգրկելուց, տենդերների թափանցիկ անցկացնելուց, կատարված աշխատանքի որակի վրա վերահսկողության խստացումից:

Վերը նշված հարցերի պլանավորման և դրանց իրականացման ուղղությամբ կատարված արդարացված քայլերը միայն համապատասխան քաղաքական կամքի գոյության դեպքում կբերեն ցանկալի արդյունք:

8. *Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել քաղաքի փողոցների մաքրությունը բարելավելու համար:*

Քաղաքի փողոցներում մաքրության որակի բարելավման միջոցառումների շրջանում գլխավոր գործոններից մեկը համապատասխան տուգանային քաղաքականություն մտցնելու մեջ պետք է որոնենք:

Ենթակառույց և տրանսպորտ

9. *Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել հասարակական տրանսպորտի համակարգի բարելավման համար:*

Տրանսպորտային համակարգը բնակչության համար պետք է ապահովի առավելագույնս հարմարավետ և մատչելի պայմաններ: Դրա համար հարկավոր է երթուղային գծերի համակարգի կատարելագործում:

10. **Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել քաղաքում ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավման համար:**

Ճանապարհային երթևեկության անվտանգությունը մեծ մասամբ կապված է ճանապարհների որակի հետ: Ուշադրության արժանի է նաև խախտումների վրա առավելագույնս համանման տուգանային սանկցիաների գոյությունը:

11. *Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք սահմանափակ կարողություններով անձանց քաղաքում տեղաշարժի հնարավորությունների բարելավման համար:*

Սահմանափակ կարողություններով անձանց տեղաշարժի համար մատչելի պայմանների ստեղծումը բարդ խնդիրներից մեկն է, որը սկսվում է ճանապարհների և մայթերի համապատասխան սարքավորմամբ և շարունակվում է տրանսպորտի հետ կապված թեմայի լուծմամբ: Նշված հիմնախնդիրների որոշակիորեն լուծումը անպայմանորեն կհասցնի ցանկալի արդյունքի

Մշակույթ և կրթություն

12. *Ի՞նչ ծրագրեր կիրականացնեք մշակութային կյանքի բարելավման համար*::

Մայրաքաղաքի մշակութային կյանքի մակարդակի բարելավումը կախված է այս նպատակով որոնվող գումարների համապատասխանաբար բաշխելուց:

13. Ձեր իրավասության սահմաններում, ինչպե՞ս կգործեք կրթության մատչելիության և որակի բարելավման նպատակով:

Կրթության մատչելիության և որակի նկատմամբ մայրաքաղաքի քաղաքապետարանի ծառայության իրավասությունը միայն նման հիմնարկության և դրանց շուրջը գոյություն ունեցող ենթակառույցի բարելավման վրա է տարածվում:

Անվտանգություն և հանցագործություն

14. Ձեր իրավասության շրջանակներում, ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք հանցագործության դեմ պայքարի, հանցանքի կանխարգելման համար:

Հանցագործության կանխարգելումը մեծ մասամբ կախված է մայրաքաղաքի ուժային կառույցների գործունեությունից և կրթության և մշակութային ոլորտում աշխատող անձանց հետ համաձայնեցված գործողությունների որակի բարձրացումից:

Առողջապահություն և սոցիալական քաղաքականություն

15. Ինչպիսի՞ն կլինի քաղաքում Ձեր սոցիալական քաղաքականությունը և ի՞նչ սոցիալական ծրագրերի իրականացման համար կհոգաք:

2014 թվականի բյուջեն, ցավոք սրտի, չի տալիս արդյունավետ սոցիալական ծրագրեր մշակելու և իրականացնելու հնարավորություն: Իշխանությունում «չկեղտոտված» ուժի գալուց հետո, եկող տարվա բյուջեի պլանավորումը միանգամայն այլ աստիճանի կհասցվի, ինչը իրատեսական սոցիալական ծրագրերի պլանավորման-իրականացման հնարավորություն կտա:

16. Ի՞նչ միջոցառումներ կիրականացնեք Ձեր քաղաքում առողջապահության ընդհանուր ցուցիչների բարելավման համար:

Վրաստանի առողջապահության համակարգը կողմնորոշված պետք է լինի շուկայական ռազմավարություններին, որպեսզի ապահովվի երկրի բնակչության համար մատչելի և արդյունավետ արդյունքների ստացումը:
Այս տեսակետից, իրականացվելիք միջոցառումների շրջանում, գլխավորը երկրի ռազմավարության տեսադաշտը լրացնող միջոցառումների անցկացումն է, մասնավորապես, ուշադրություն պետք է դարձվի. հիվանդանոցների սեփականաշնորհմանը, առաջնային առողջապահության համակարգի բարեփոխմանը, սոցիալապես կարիքավոր բնակչության առողջապահության ծառայության ծախսերի ֆինանսավորումը մասնավոր

ապահովագրության միջոցով, հասարակական առողջապահության հիմնական ծառայությունների ֆինանսավորումը պետության կողմից և այլն:

17. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել քաղաքում անօթևանների սոցիալական պայմանները բարելավելու համար:

Անօթևանների սոցիալական պայմանների բարելավման ուղիները պետք է փնտրել բյուջետային միջոցների և մասնավոր ներդրումների քաղաքականությունը արդարացի վարելու մեջ:

Էկոլոգիա, ռեկրեացիա և սպորտ

18. Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել քաղաքի էկոլոգիական իրավիճակի բարելավման համար:

Քաղաքի էկոլոգիական իրավիճակի բարելավումը հնարավոր է միայն բյուջետային միջոցների և մասնավոր ներդրումների քաղաքականությունը արդարացի վարելու դեպքում:

19. Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքում ռեկրեացիոն (հանգստյան) գոտիների, զբոսայգիների ընդարձակման և զարգացման համար:

Քաղաքում գոյություն ունեցող հանգստյան գոտինների, զբոսայգիների ընդարձակման և զարգացման համար մատչելի պայմանների ստեղծմանը զուգահեռաբար անհրաժեշտ է, առավելագույնս բարեկարգել շենքերի ներքին բակերը:

20. Ի՞նչ մտադրություններ ունեք սպորտի և առողջ կենսակերպի զարգացման և մարզական-ռեկրեացիոն ենթակառույցի բարելավման համար:

Սպորտի և առողջ կենսակերպի զարգացման և մարզական-հանգստյան ենթակառույցի բարելավման համար անհրաժեշտ է բյուջետային միջոցների և մասնավոր ներդրումների քաղաքականությունը վարել արդարացիորեն:

Թբիլիսի

21. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում քաղաքում անցկացնել հետիոտնի տեղաշարժի անվտանգությունը և հարմարավետությունը բարելավելու համար:

Քաղաքում հետիոտնի տեղաշարժի անվտանգությունը և հարմարավետությունը բարելավելու արդյունավետ միջոց է ներկայացնում ոչ միայն ճանապարհների որակի

բարձրացումը, այլև մայթերի բարեկարգումը և լուսանշանների համակարգի արդարացված աշխատանքի համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

22. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել քաղաքում ավտոմոբիլային երթևեկության կարգավորման և ճանապարհային խցանների կրճատման նպատակով:

Քաղաքում ավտոմոբիլային երթևեկության կարգավորման և խցանների կրճատման համար գլխավորը քաղաքի քաղաքային զարգացման հետ կապված արդյունավետ ծրագրերի մշակումը և իրականացումն է:

23. Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել փոդոցային կենդանիների հիմնախնդրի կարգավորման համար:

Անտեր կենդանիների հիմնախնդրի կարգավորումը կախված է համապատասխան ծառայության ոլորտում կատարվելիք ներդրումների չափից:

24. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել անավարտ շինարարությունների, վթարային շինությունների հիմնախնդիրների կարգավորման համար:

Անավարտ շինարարությունների, վթարային շինությունների հիմնախնդրի լուծումը, տենդերային պայմանների բարելավման հետ միասին, մեծ մասամբ կախված է այս ոլորտում զբաղված կազմակերպությունների նկատմամբ տուգանային պայմանների խստացումից:

25. Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքի պատմական արտաքին տեսքը պահպանելու համար:

Քաղաքի պատմական արտաքին տեսքի պահպանումը հնարավոր է արդարացված քաղաքային քաղաքականություն վարելու դեպքում: Համապատասխանաբար, այս ոլորտում իրավասու կադրերի ընդգրկումը ներկայացնում է վերոհիշյալ նպատակին հասնելու ամենակարճ ճանապարհը:

26. Ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը Թբիլիսիի շրջանցիկ երկաթգծի շինարարության հարցին:

Թբիլիսիի շրջանցիկ երկաթգծի շինարարությունը պետք է հասցվի մինչև վերջ:

27. Ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը Վակեի զբոսայգու մոտակայքում պլանավորված հյուրանոցի շինարարության հարցին:

Վակեի զբոսայգու մոտակայքում պլանավորված հյուրանոցի շինարարությունը ամենակարճ ժամանակում պետք է ավարտված լինի, ինչը, համապատասխան ենթակառույցի ստեղծման հետ միասին, կնպաստի Վակեի զբոսայգում հանգստանալու անհրաժեշտ պայմանների կարգավորմանը: